

«ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (COAF) նախատեսում է իրականացնել Արցախի հանրապետության քաղաքացիներին անհատույց օգտագործման հանձնված թվով 4 տների բնակելի տարածքների վերանորոգման, բարեկարգման և ցանկապատման աշխատանքներ: Վերը նշված տները կառուցվել և վերանորոգվել են հիմնադրամի մեկ այլ ծրագրով: Նախատեսվում է նաև ավելի ապահով դարձնել Դեբետ համայնքում գործող ՍՄԱՐԹ Կենտրոնի խելացի ջերմոցի տարածքը: Ջերմոցի օդային տարածքով անցնող բարձր լարման էլեկտրական մալուխների տեղափոխումը թույլ կտա ընդլայնել ջերմոցի օգտագործվող տարածքը: Ինչպես նաև նախատեսվում է ձեռք բերել Լեզո կրթական հավաքածուներ հիմնադրամի շահառու երեխաների համար: Կրթական հավաքածուները օգտագործվելու են հիմնադրամի թվով 11 ճարտարագիտական խմբակների կրթական ծրագրերում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով՝ օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Զիլդրեն ՕՖ Արմենիա Ֆանդ Ինք.», Նյու Յորք, ԱՄՆ, 149 5րդ ավենյու, սենյակ 500 (Children of Armenia Fund Inc. 149 5th Ave., Suite 500, New York 10010, USA. և դոկտոր Գաբո Հ. Արմենը:
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ (ՀՀ քաղ. Երևան 0010, Մելիք Ադամյան 2/2, ՀՎՀՀ՝ 02569972):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Լոռու մարզ, Դեբետ և Դսեղ համայնքներ, բնագավառը՝ համայնքային զարգացում
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 31,440,063 (երեսունմեկ միլիոն չորս հարյուր քառասուն հազար վաթսուներեք) ՀՀ դրամ:

7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Լոռու մարզի Դեբետ, Դսեղ համայնքները և ՔՈԱՖ ՍՄԱԲԹ կենտրոնը:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2021 թվականի օգոստոսի 15-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	• Լեգո սփայք պրայմ բեյզ սեթ (Lego education spike prime base set) տեսակի կրթական 30 հատ հավաքածուների ձեռքբերում թվով 11 ճարտարագիտական ակումբների համար: Ընդամենը 8,250,000 (ութ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում, • Լոռու մարզի, Դեբետ համայնքի 1-ին փողոց, 31 հողամաս հասցեում գտնվող ՍՄԱԲԹ կենտրոնի այգու (խելացի ջերմոց) տարածքից էլեկտրական օդային մալուխների ապամոնտաժման և վերջիններիս ստորգետնյա ճանապարհով անցկացման աշխատանքների իրականացում ընդամենը 11,670,813 (տասնմեկ միլիոն վեց հարյուր յոթանասուն հազար ութ հարյուր տասներեք) ՀՀ դրամի շրջանակներում, ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում: • Լոռու մարզի, Դսեղ համայնք 49 փողոց 6/2 և 6/3 հասցեներում գտնվող թվով 2 պանելապատ, մոդուլային տների տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում 2,927,360 (երկու միլիոն ինը հարյուր քսանյոթ հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամի շրջանակներում, ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում, • Լոռու մարզի, Դսեղ համայնքի 49 փողոց թիվ 6 և 6/1 բնակելի տների պատշգամբների վերակառուցման, սալվածքների և տարածքի ցանկապատման աշխատանքների իրականացում ընդամենը 8,591,890 (ութ միլիոն հինգ հարյուր ինսունմեկ հազար ութ հարյուր ինսուն) ՀՀ դրամ, ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	ՀՀ տարածքում նախատեսվում է ձեռք բերել 8,250,000 ՀՀ դրամին համարժեք լեգո կրթական հավաքածու, ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում: Նախատեսվում է կնքել 23,190,063 ՀՀ դրամին համարժեք կապալի պայմանագրեր՝ ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում: Ներմուծումներ նախատեսված չեն:

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցել Հայաստանի Հանրապետության կառավարության, Լոռու մարզպետարանի, Դսեղի և Դերենտի համայնքապետարանների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ս. ՊԱՊԻԿՅԱՆ